ՆՈՐ-ԴԱՐ

№ 175 ՏԱՍՆԵՒՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ Երեքշաբթի, 29 Սեպտեմբերի 1898 Երեքշաբթի, 29 Սեպտեմբերի ՏԱՍՆԵՒՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ № 175

Տարեկան՝ 10 րուբլի, վեց ամիսը 6 րուբլի, երեք ամիսը՝ 3 ր. 50 կ.
Թիֆլիսում ամիսը՝ 1 ր., հասով 5 կ.
Բաժանորդ գրւում են Թիֆլիսում միմիայն խմբագրատունը։

Խմբագրութեան հասցէն՝ Тифлисъ, Редакція „Норъ-Даръ“
կամ Tiflis, Rédaction „Nor-Dar“

Խմբագրութիւնը բաց է ամեն օր (բացի ոտն օրերից) ժամը 9-ից մինչև 2-ը։ Յայտարարութիւնները ընդունւում են ամեն լեզուներով։ Յայտարարութիւնների բառին՝ 2 կ., բեկւածների համար՝ կրկնապատիկ

«Նոր-Դար»-ի խմբագրատունը գտնւում է Ծօղլայա-Վաղալօշնայա փ. Ե եւ Գ քաղաքամասերի սահմանում, Այվազովի տանը, № 20, Սապեօրնի գօրանոցի դիմացը։

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՑԻՆ ՎԱՐԿԻ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

վարչութիւնը սրանով յայտարարում է ի գիտութիւն ընկերութեան անդամների, որ կանոնադրութեան § 71-ի գօրութեամբ ժամադիր վճարումների (срочный платежъ) հաւաքման համար սրուած եռամսեայ արտօնութիւնը լրանում է սոյն տարուայ հոկտեմբերի 1-ին և թէ մինչև վերոյիշեալ ժամանակամիջոցը չհաւաքագրելու դէպքում, անկանոն վճարողների կայքերը, Կանոնադրութեան § 72-ի հիման վրայ, հրապարակով ի վաճառ կը հանուին։

(1102) 1—1

ԲՈՂԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Առաջնորդող. — ձշմարիտը և կեղծը։
Քրոնիկոն.—Լուրեր։
Մեզ գրում են.— Ղամպուրայից։
Ցիշողութիւններ ու խորհրդածութիւններ։
Թղթակցութիւններ. — Եկատերինոդար։ Ասխարադ։
Քաղաքական.—Դրայֆուսի գործը։ Զինաթափի խնդիրը։ Սերբիա։ Ցեղափոխութիւնը Զինաստանում։
Հեռագրներ։
«Նոր-Դար»-ի պատասխանները։
Տեղեկատու։
Յայտարարութիւններ։

Թիֆլիս, 28 սեպտեմբերի 1898 թ.

ՃՇՄԱՐԻՏԸ ԵՒ ԿԵՂԾԸ

Երեկ, կիրակի օրը, սեպտ. 27-ին Թիֆլիսի Խոջիվանքի գերեզմանատունը խուռն բազմութիւն էր, հայոց մամուլի ներկայացուցիչների և բազմաթիւ պրոշների, ուսուցիչների ներկայութիւնը հանդիսաւոր կարգով բացուեց հանգուցեալ Բաֆֆու յիշատակին կանգնեցրած արձանը։

Եկեղեցական կարգ կատարուեց, ոչ ոք ճառ չխօսեց. հանգուցեալի համար խօսողները նրա երկերն են, նրա մտքի ու երևակայութեան արդիւնքը։

Բաֆֆու, իբրև հայ յայտնի վիպասանի, յիշատակին կանգնեցրած արձանը պատիւ է բերում հայ հասկացող հասարակութեան և նրանց, որոնք մտածեցին ու գլուխ բերին այդ համակրելի գործը։

Աւելորդ չէր լինիլ, եթէ այդ ասէիւ լսէին մեզ և կամենային յարգել Բաֆֆու յիշատակն ուրիշ կերպով։

Ցանկալի էր, որ կարելոյն չափ մեր հասարակական կեանքի, մեր գրականութեան մեր լրագրութեան մէջ *կեղծիքին* տեղի տար *ճշմարտութիւնը*, իսկ *ապիկին*—*լուրջ գործը*։

Վերջին քսանուհինգ տարուայ ընթացքում գնալով կեղծիքը զօրանում, ապիկն ամեն բանի տեղն է բռնում։

Այդպիսով ամբողջ հասարակութիւնը և նրա մտաւոր կեանքի ընթացքն անկանոն ու հիւանդոտ է դարձել։

Մեր մէջ ոչ մի գործ և ոչ մի գործիչ, ոչ մի գրող և ոչ մի տաղանդ չէ գնահատում ճշմարտութեամբ և չէ դրւում իրեն արժանի ու հասանելի շրջանակի մէջ։

Մէկը հռչակւում է հակայ տիտան, սրբութիւն, միւսը թզուկ, հրէշ,—և հոսանքը պատրաստ է։

Ո՛վ կարող է հոսանքի դէմ կանգուել, ճշմարտութիւնն յայտնել և իւրաքանչիւրին իրեն հասանելի տեղումը դնել։

Միմիայն ուժեղ բնաւորութեան ու հոգու տէր մարդիկ կարող են այդ անել։ Բայց այդ տեսակ «խելագարները» կան արդեօք մեր մէջ և քանիսն են...

Մեր ինտելիգենցիա կոչուած հասարակութիւնը հիւանդոտ է մեր մտաւոր-գրական և հրապարակախօսական աշխարհում տիրողը՝ կեղծիքն է, ապիկն է։

Այդ հաստատելու համար կարիք չկայ հեռու գնալու։ Անցեալ օրը «Նոր-Դար»-ը հրատարակեց Բաֆֆու արձանի համար եղած ժողովարարութեան հաշիւը։

Այդ հաշուետուութեան մէջ աչքի ընկնողը հաւաքած դումարի քչութիւնը չէ, բաւական է, որ սրտով և գիտակցութեամբ լինի արուած, թող մի կոպէկ լինի իւրաքանչիւրի տուած նուէրը։

Ուշադրութեան արժանի և յուսահատեցնողն այն հանգամանքն է, որ Թիֆլիսը, Բագուն և ուրիշ շատ քաղաքներ չեն մասնակցել հանգանակութեան։

Այդ միանգամից պարզում է ամեն բան և ցոյց է տալիս, որ անցեալում, մօտիկ անցեալում կեղծիքն ու ապիկը մեծ և վրճռական տեղ են բռնել։

Մէկ տեսնէիք՝ թէ ինչպէս թափեցին Բաֆֆուն, թէպէտև խիստ անձրևէր գալիս. ինչ շարժմունք, ինչ ազմուկ և ինչքան պատկ... ինչպիսի ցաւակցական ցոյցեր։

Ով կարող էր մի որևէ, թէկուզ ամենաարդար և ճշմարիտ դիտողութիւն անել, դա անպայման խոնարհում չէր մեծ և տիեզերական հանճարի առաջ...։

Նայողը, դիտողը պիտի ընդունէր, որ ինտելիգենտի սալոնից սկսած մինչև քարվանսարանների վերջին մշակը գիտէ, ճանաչում է և սիրում է Բաֆֆուն։

Բայց իրողութիւնը ցոյց է տալիս, որ ամբողջ քաղաքները չեն էլ ճանաչում, չեն էլ ուզում իմանալ և չեն զգում, որ եղել է Բաֆֆի և նա մի բան է գրել։

Եթէ Բաֆֆու թաղումն անշուք էլ լինէր, եթէ նրան չճանաչէին և ժամանակակից սերունդը չգնահատէր նրա գրուածքները, նրա տաղանդը, դրանով Բաֆֆին ոչնչով չէր կորցնիլ։ Ոչ թէ Բաֆֆին, այլ Զիլլերի պէս հանճարը չգիտէր, թէ ինչով ապահովեցնէր իւր ընտանիքի օրական ապրուստը. նա իւր բոլոր երկերի համար այնքան գումար չի ստացել, ինչքան որ ստացւում է այսօր նրա պիեսների ներկայացման համար լոյս տեսած աֆիշներից՝ նոյն իսկ հէնց մի կարճ ժամանակամիջոցում. այսօր անմահ Զիլլերին աշխարհն յիշատակում է և խոնարհւում նրա հանճարի առաջ։

Իսկ Բաֆֆու համար այսօր իմանում ենք, որ այն աւիւնը մեծ մասամբ չինովի ցոյցեր են եղել։ Այդ պատմում է մեզ նրա արձանի մասին հրատարակուած հաշիւը։

Ցաւալի է այդ, բայց իրողութիւն է։

ՔՐՈՆԻԿՈՆ

Երկրիս Գառավարչապետ գեն.-ադ. իշխան Գ. Ս. Գալիցինը սեպտեմբերի 26-ի երեկոյեան գնացքով ուղևորուեց Գանձակ, իսկ հետեւեալ օրը 27-ի առաւօտեան մուտ է գործել այնտեղ։ Այս առթիւ Գանձակը շքեղ զարդարուած է եղել դրօշակներով։ Իշխ. Գառավարչապետը երեկ, սեպտ. 28-ին, վերադարձաւ Թիֆլիս։

—

Սեպտեմբերի 24-ին Բորժոմ ամարանոցում նորին կայսերական Բարձրութիւն Միխայիլ Նիկոլայեւիչն ներկայացել է Գուրիայի նահանգի ազնուականութեան կողմից մի պատգամաւորութիւն և հրաւիրել է Մեծ Իշխանին այցելել Գուրիա և ճաշ ընդունել։ Մեծ Իշխանն անկեղծ շնորհակալութիւն է յայտնել պատգամաւորութեան՝ յայտնելով որ Ինքը Գանիայի թագուհու մահուան առթիւ սուգի մէջ է, ուրեմն և չի կարող ընդունել նրանց հրաւէրը։ Իշխանն ակնարկելով թէ Ինքը հաւատում է Կովկասի բոլոր բնակիչների զէպի Ինքն ունեցած անկեղծ զգացմանց, վերջացնում է իւր խօսքերն այսպէս. «Խնդրում եմ աղնուականութեանը յայտնել իմ անկեղծ շնորհակալութիւնս, ինձ միշտ համարել զէպի ձեզ բարեհաճ և դիմել ամեն զէպքում Ինձ, երբ ձեզ հարկաւոր կլինի Իմ օգնութիւնը բարձրագոյն պետական շրջանում»։

—

Կիրակի, սեպտեմբերի 27-ին, Թիֆլիսի Խոջիվանքի գերեզմանատունը տեղի ունեցաւ Բաֆֆու մահարձանի բացումը։ Հանդէսի բացումից առաջ պատարագ մատուցուեց գերեզմանատան եկեղեցում, որից յետոյ ժամը 1-ից անց հոգեւորականութիւնը ժողովրդի ուղեկցութեամբ դիմեց դէպի հանգուցեալ վիպասանի գերեզմանը։ Այստեղ ժամը 11-ից արդէն սպասում էր ամեն դասակարգի տիկնանց, օրիորդների և այլ մարդկանց մեծ բազմութիւն։ Ներկայ էին և մամուլի ներկայացուցիչներ։ Հանդէսին գլուխ էր անցած Թեմիս սրբազան առաջնորդը։ Հանգուցեալ վիպասանի գերեզմանի վրայ հանդիսաւոր հոգեհանգիստ կատարուեց։ Ոչ մի ճառ չխօսուեց։ Հանդէսը վերջացաւ Եկմալեանի քառաձայն «Հայր մեր»-ով, որը այդպիսի հանդէսներին միշտ զօրեղ տպաւորութիւն է թողնում։

Մահարձանը սպիտակ մարմարի մի բարձր սիւն է, որի գագաթը պսակւում է նոյնպէս մարմարի քիարով. սիւնի մէջ տեղը մի պսակ է քանդակուած և պսակի մէջը՝ «Բաֆֆի» անունը, իսկ ներքևը, սիւնի պատուանդանի վրայ փորագրուած է Յակոբ Մելիք-Յակոբեանի (Բաֆֆու) յայտնի «Ձայն տուր, ով ծովակ» ստեղծուածից մի կտոր։

—

«Նով. Օբ»-ն լսել է, որ պիկին Ե.Նալբանդեանը ցանկութիւն է յայտնել 3,000 րուբ. նուիրելու Ազ. Երիցեանի աշխատասիրած «Հայոց կաթոլիկոսութիւնը XIX-րդ դարում» (3-րդ հատոր) մեծածաւալ գիրքն ի լոյս ընծայելու։ Այս նոր գիրքը ամբողջապէս նուիրուած է Ներսէս V Աշտարակցու կաթողիկոսութեան շրջանին։ Տիկ. Նալբանդեանի հանդուցեալ ամուսինը Ներսէս կաթողիկոսի հաշուով է սովորել մանկութիւնից և աւարտել է համալսարանական դասընթացը։

—

Այս քանի օրերս Ներսիսեան դպրանոցի գրադարանը ստացել է Մոսկուայից պ. Մելքոն Փանեանից (հանգուցեալ Ստեփաննոս Նազարեանի կնքահօրից) մօտ 450 կտոր ընտիր գրքեր, որոնք համարեա բոլորն էլ կազմուած են փառահեղ կազմով և որոնց մէջ կան ռուսերէն, ֆրանսերէն, գերմաներէն, լատիներէն և այլ լեզուներով գրքեր։

—

Նախիջեւանից «Կասկազ»-ին գրում են, թէ սեպտ. 20-ին կիրակի օրուայ պատարագից առաջ ս. Վլադիմիր եկեղեցու քահանան Գաբակատանից Ռուսիա եկած 53 բանուոր ասորի նեստորականի միացրել է պրաւոսլաւութեանը։ Դրանից յետոյ մաղթանք է կատարուել վասն կենաց Կայսերական Տան, ս. սինոդի և նրա անդամ Վրաստանի էքզարխ Փլատոնի։

—

Նոյն լրագրին հաղորդում են Ելենենդորֆ գաղութից (Գանձակի նահանգ), թէ այնտեղ չուտով կբվերջանայ մի մեծ վայլցովի ալիւրաղացի շինութիւնը բոլոր մեխանիկական յարմարութիւններով և ելեքտրական լուսաւորութեամբ։ Այս ալիւրաղացը մի օրում կարող կլինի 2,500 պուդ ցորեն աղալ։

—

—

Ռուսական խաղողի գինին վաճառման նոր շուկայ է գտել։ «Սին.-Օտ.»-ի ասելով, մօտ օրերս Ճափոնացի վաճառականները Ղրիմի հարաւային ափում տնային քանակութեամբ գինի են գնել և շուտով ուղարկելու են Նագասակի (Ճափոնիա)։ Դիմաւորապէս առնուած է սպիտակ ու կարմիր թեթև գինի, ինչպէս և հոտաւէտ ու համեղ գինիներ։

—

«Ղուկասեան և Ընկ.» նաւթարդիւնաբերական ընկերութեան կանոնադրութիւնն արդէն հրատարակուած է։ Ընկերութեան վարչութիւնը Պետերբուրգումն է. հիմնական դրամագլուխը 2,400,000 ր. է։

—

Ընդարձակուած մինիստրը ներքին գործերի մինիստրութեան հետ ընտրելու է մի յատուկ յանձնաժողով, որը կըքննի Կովկասում գիւղական և գաւառականական ռեֆորմների մացնելու խնդիրը։ Սոյն յանձնաժողովի զբաղմունքները կըսկսուեն նոյեմբերի վերջերին։

—

Անդրկովկասի անասնաբոյժների համագումարին, որ տեղի ունեցաւ սոյն սեպտ. երկրորդ կիսին, լսիջի այլոց որոշուած է, որ եղջիւրաւոր կենդանիների մէջ ժանտախտի տարածման առաջն առնելու համար՝ Պարսից և Թուրքաց սահմաններում հիմնուին անասնաբուժական կայաններ, ուր պէտք է հսկեն արտասահմանից ներմուծուող եղջիւրաւոր կենդանիներին։

—

Խարկովի ուսումն. շրջանի հոգաբարձուն հարց է յարուցել, թէ արդեօք հարկաւոր է աղանդաւոր աշակերտներին, որոնք պրաւոսլաւ աշակերտների հետ հաւասար սովորում են կրօնագիտութիւն, քննութեան ենթարկել միանների հետ և թուանշաններ դնելատեստատների ու արձակման վկայագրերի մէջ։ Այս մասին լուսաւորութեան մինիստրութիւնը ս. սինոդի օբեր-պրոկուրորի համաձայնութեամբ դրական պատասխան է տուել։

—

Թիֆլիսի քաղաքային խորհրդի ուսումնարանական յանձնաժողովը իւր վերջին նիստում որոշել է յանուն ռուս կրիտիկոս Բելինսկու՝ բաց անել քաղաքին երեքդասեան ուսումնարան (6 բաժանմունքով)։

—

Վիեննայի «Observer» տպագրական բիւրոյից ստացել ենք մի յայտարարութիւն, որի մէջ յայտնում է, թէ ինքը հանգուցեալ եղիսաբէթ կայսրուհու մահուան առթիւ գրուած յօդուածները հաւաքում է, որպէս դի այլևս հրատարակի և այս նպատակի համար՝ Կովկասեան հրատարակութիւններից էլ խնդրում է Կայսրուհու մասին լոյս տեսած յօդուածներ պարունակող №. №-ից երեքական օրինակ։ Բիւրոյի հասցէն ընթերցողը յայտարարութեան բաժնում կըգտնէ։

—

ՄԵԶ ԳՐՈՒՄ ԵՆ

—

ՉԱՄԴՈՒՐԸ գիւղից (Ախալքալաքի գաւառ).—Մեր գիւղական տանուտէրը ձա-

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԱԿԱՆՈՒԹԻՒՆ ՎԱՐԺԱՊԵՏ ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ

Ա. Ե. Ա. Ռ. Ա. Կ. Ե. Ա. Ն

ԱՐՏԱՍՈՒՄ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ.— Ինձ թղթ. Belgique-ի մասին, որի մասին դուք հարցնում եք, ես ոչինչ չեմ կարող ասել, որովհետև ես այնտեղ չեմ եղել։ Ես միայն գիտեմ, որ Բելգիայում հայ գաղթականներ չկան։

ՀԱՐՑԱՍԵՐ. — Ինչպե՞ս է ձեզ թվում, ի՞նչ կարող է լինել Ռուսաստանի ապագան։

ՊԱՏԱՍԽԱՆ. — Ես ոչ մարգարե եմ, ոչ էլ գուշակ, որ կարողանամ ասել, թե ինչ կլինի Ռուսաստանի ապագան։ Ես միայն գիտեմ, որ Ռուսաստանի ներկայ դրությունը ամենևին էլ նախանձելի չէ։ Ռուսաստանի ներկայ դրությունը ամենևին էլ նման չէ Ֆրանսիայի դրությանը։ Ֆրանսիան ունի ազատ մամուլ, ունի ազատ խոսք, ունի ազատ ժողով, ունի ազատ ընտրություններ, ունի ազատ պառլամենտ, ունի ազատ ժողովրդական ներկայացուցիչներ, ունի ազատ ամեն բան։ Ռուսաստանում ոչինչ չկա ազատ, ամեն բան կապկպված է, ամեն բան ենթակա է ոստիկանական հսկողության։ Ռուսաստանում ամեն մի ազատ խոսք, ամեն մի ազատ մտքի արտահայտություն, ամեն մի ազատ ժողով, ամեն մի ազատ ընտրություն

Այրի կայսրուհին ամեն օր մինիատյուրին ընդունում է բացարձակ կերպով, նստած կայսրի կողքին, այլ ոչ թէ առաջուայ պէս – վարագոյրի ետևը: Կառավարութիւնն առաջուանից աւելի յատադէմ է, և ցգունդ-լի-համենում ոչ մի անդամ չկայ, որ արտաքին գործերից բան լինի հասկանալիս: Նախատաճ կը նշանակուի Խուանեչինգը, Ռուսիայի չինաց նախկին դեսպանը: Ռուսներն ուրախութեամբ ողջունում են կառավարութեան փոխուիլը, որովհետև այդ բանի չնորհիւ նրանց ազդեցութիւնը Պեկինում կրկնասկանայ: Այժմ յայտնի է կացուցուած, որ այրի կայսրուհու՝ կառավարութեան գլխն անմիջապէս իւր ձեռքն առնելու պատճառն այն հրամանն էր, որով կարգադրւում էր, որ պաշտօնեաները կարեն իրենց մազերի հիւսերը և եւրոպական չորեր հագնեն:

ԿՈՊԵՆՀԱԳԷՆ, 27 սեպտեմբերի.— Թագաւոր Կայսրն այստեղ ժամանեց «Պոլեարնայա զվեզդա» զբօսանաւով: Դիմաւորեցին Թագուհի Կայսրուհի Մարիա Ֆէօդորովնան, յունաց արքայական զոյգը, Կումբերլանդի հերցոգն ու հերցոգուհին, Ուէլսի պրինցեսսը և արքայական տան միւս անդամները:

ՀՌՈՄ. — Կառավարութիւնը կրեակէ կուլարկի հետևակների դարձեալ մի զօրաբաժին և երկու նաւ:

ՉԱՆԿՀԱՅ.—Խանկօու քաղաքի չինաց մասում սեպտեմբերի 19-ին հրդեհ ծագեց, որը ոչնչացրեց տասը հազար տուն: Մահացաւ հազար հոգի: Հրդեհը բռնում է անգլիական երկու քառակուսի մղոն տարածութիւն:

ՀՌՈՄ.— Անիչխանականների դէմ մի-ջոցներ ձեռք առնելու համար կոնֆերենցիան կրկայանայ Հռոմում և ոչ թէ Ժընևում:

ՅՕԿՈՀԱՄԱ.—Ճափոնիան, իւր հպատակներին պահպանելու համար, երկու յածանաւ է ուղարկում չինական ջրերը:

ՊԱՐԻԶ.—Բանուոր գործադուլ անողները մերժում են կապալառուների պայմանները: Կէսօրից յետոյ մի մեծ խումբ գնաց խանդարելու բանուորական բորսայի մօտ կատարուող աշխատանքները: Ոստիկանութիւնը, թոյլ լինելով անկարգութիւններին վերջ տալու, զօրքեր կանչեց, որոնք պահանջեցին, որ ամբոխը ցրուի: Ամբոխը հնազանդուեց:

ՊԱՐԻԶ.—Սեպտ. 26-ին, առաւօտեան, աշխատանքները մասամբ վերանորոգուեցին Մարսեան դաշտում, Ելիսեան դաշտերում և ուրիշ տեղերում:

ՊԵԿԻՆ.—Դեսպանները ցգունդ-լի-համենին յայտարարեցին, որ ամեն տեսակ դիւրութիւններ են սպասում զօրքերի փոխադրութեան համար և առանձին գնացքներ պահանջեցին: 30 կազակ, ռուսաց 36 նաւատի երկու թնդանօթով, Բրիտանական 25 նաւատի և գերմանական 30 հետևակ զինուոր այստեղ հասան և մտան քաղաք: Ժողովրդի մեծ խմբեր էին հաւաքուել, բայց անցքեր չպատահեցին: Հինայիներին, ըստ երևոյթին, վախեցրած են:

Կ. ՊՈԼԻՍ.— Կրեէին վերաբերեալ յայտագիրը Իրանն յանձնելիս, անգլիական կողմից բերանացի յայտարարուած է, որ եթէ թուրքաց կառավարութիւնը խուսափական պատասխան տայ կամ չհամաձայնի իւր զօրքերը հեռացնելու այդ բանը մերժման տեղ կընդունուի:

ՊԱՐԻԶ. — «Figaro»-ն հաւատացնում է, որ կառավարութիւնը մի չքմեղաբան է ուղարկել ժանդարմական բոլոր պլնաւորներին, յիշեցնելով նրանց այն դէնքը, որով Օրլէանի հերցոգն արտաքսուած է Ֆրանսիայից, և կարգադրում է ձերբակալել նրան, եթէ նա փորձի սահմանն անցնելու:

ՕՀԱՅՕ.—Տիկին Մակ-Կինլէյի եղբայրը, Ջօրջ Սակսոնը, հրացանով սպանուած է փողոցում: Ձերբակալուած է մի կին, որի վրայ կասկած կայ, թէ նա է սպանողը:

«ՆՈՐ-ԴԱՐ»-Ի ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

Բազում պ. Ծոցիկեանին: Մենք էլ ենք զարմացել իմանալով, որ յօդուածը մեզ չէք ուղարկել: Խմբագրութիւնս ընդունել է, որ «Նոր-Դար»-ին է ծրարն ուղարկուած և հրատարակել է: Շատ կըսելի է, որ դուք սխալմունքով ծրարի վրայ «Նոր-Դար»-ի հասցէն էք դրել. այդպէս բան պատահում է: Ցամենայն դէպս իմացէք, որ մեզ համար ամենևին հաճելի չի կարող լինել այդ սխալմունքը:

Խմբագիր-հրատարակիչ՝
ՍՊԱՆԴԱՐ ՍՊԱՆԴԱՐԵԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ՌԱԶՄԱՎԻՐԱԿԱՆ ՃԱՆԱՊԱՐՀ

1898 թ. մայիսի 1-ից մինչև 1898 թ. նոյեմ. 1

Ախֆլիսից I-լին հինգ տեղ ունեցող կառքը մեկնում է առ.9 ժ.30 ր. գիշերում է Մլէթում և հասնում է Վլադիկաւկազ միւս օրը եր. 7 ժ. 20 ր.: II-ը մեկնում է առաւօտեան 11 ժամին և գիշերում է Պասանաուրում. հասնում է Վլադիկաւկազ միւս օրը եր. 9 ժ. 20 ր.:

Վեց տեղ ունեցող I-լին հանրակառք (առանց գիշերելու) մեկնում է օրուայ 2 ժ. 30 ր. և հասնում է Վլադիկաւկազ միւս օրը եր. 4 ժ. 35 ր. II-ը մեկնում է եր. 3 ժ., առանց գիշերելու, հասնում է Վլադիկաւկազ միւս օր եր 11 ժ. 20 ր.:

Վլադիկաւկազից հինգ տեղ ունեցող I կառքը մեկնում է առ. 7 ժ. գիշերում է Մլէթում և հասնում է Թիֆլիս միւս օրը եր. 6 ժ. 30 ր.: II-ը մեկնում է առ. 9. 30 ր. գիշերում է Դաւդաւրում և հասնում է Թիֆլիս միւս օրը 7 ժ. 55 ր.:

Վեց տեղ ունեցող I-լին հանրակառք (առանց գիշերելու) մեկնում է եր. 5 ժ 30 ր. և հասնում է Թիֆլիս միւս օր եր.7 ժ. 25 ր.: II-ը մեկնում է եր. 3 ժ. և առանց գիշերելու հասնում է Թիֆլիս միւս օրը եր. 10 ժ. 55 ր.:

—

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

Մարդատար գնացքը № 1 Բազուից Թիֆլիս մեկնում է օրուայ 4 ժ.50 ր. հասնում է *Թիֆլիս* առ. 8 ժ. 26 ր., մեկնում է *Թիֆլիսից Բաթում* առ. 9 ժ. 10 ր., հասնում է Բաթում եր. 8 9. 47 ր.

Փոստային գնացքը № 3 Բազուից, Թիֆլիս մեկնում է գիշ. 12 ժ. 20 ր., հասնում է Թիֆլիս եր. 6 ժ. 33 ր., մեկնում է *Թիֆլիսից Բաթում* եր. 7 ժ. 48 ր., հասնում է Բաթում առ. 8 ժ. 33 ր.:

Մարդատար գնացքը № 2 մեկնում է Բաթումից Թիֆլիս առ. 8. ժ. 20 ր, հասնում է Թիֆլիս եր. 8 ժ. 22 ր., մեկնում է *Թիֆլիսից Բազու* եր. 9 ժ. 05 ր., հասնում է Բազու օրուայ 3 ժամին:

Փոստային գնացքը № 4 մեկնում է Բաթումից Թիֆլիս եր. 8 ժ. 35 ր., հասնում է Թիֆլիս առ. 9 ժ. 07 ր., մեկնում է *Թիֆլիսից Բազու* առ. 10 ժ. 57 ր., հասնում է Բազու առ. 5 ժ. 45 րոպէին:

—

ԴՈԿ. Գ. Ս. ԳԵՐՑՓԼՅԳԻ

որ իւր մասնագիտութիւնը պարապել է Վէնիայում, ընդունում է կաշուի, վէներ., միզակալ և սիֆիլիտիկական հիւանդութիւններ ունեցողներին՝ ամեն օր առաւօտեան 9—11 ժամը և երեկոյեան 5—8 ժ.: Մաղերեան փողոց, № 5, Լիսիցեւի տունն:

ՀԱՆԱՆՁ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

ԾՆՆԴԱԲԵՐԱԿԱՆ ԲԱԺԱՆՄԱՆՔՈՎ

(Սոլոլակ, Սպասվայա փողոց, № 64)
(սեփական տուն)
Հեռաձայն № 230

Երկհեկ հիւանդների ընդունելը ընդունելութիւնն երկուշաբթի, չորեքշաբթի և ուրբաթ օրերը՝ ժամը 2—4-ը ցերեկը. վճարը հիւանդների կարողութեան համեմատ, մասնաւոր ընդունելութիւն՝ ամենայն օր՝ ժամը 8—10 առաւօտեան—վճարը 2 ր.: Դիշերօթիկ հիւանդներ և ծննդաբեր կանայք ընդունւում են գիշերուայ և օրուայ ամեն ժամանակ, բայց այդ մասին առաջուց տեղեկութիւն պիտի արուի. վճարը որոշւում է ըստ դասակարգերի: Հոնևորները ձրի են: Գինեկոլոգիայի բաժանմունք ընդունողները վճարում են 1 ր. 50 կ. մինչև 8 ր. մի օրուգիշերուայ համար. ծննդաբերական բաժանմունքը մանողները—1 ր. մինչև 5 ր. մի օրուգիշերուայ համար: Երկունքի ապառելը 10 ր. մինչև 50 ր.: Անդամահատութիւնը ըստ համաձայնութեան: Երեհեկ բոլոր հիւանդները դեղերը և նիւթերը առանում են ընդունելութեան ժամանակ ձրի: Հոնևորների համար 1-ական մահճակալ է դրուած իւրաքանչիւր բաժանմունքում, ուր տեղաւորւում են նրանք տեսչի և նրա պ. պ. ընկերների առաջարկութեամբ ձրի:

Հիւանդանոցի տէր և տեսուչ
Մ. ՄԿՐՏՉԵԱՆ.

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՄԵՆԱՅՏՅՏՆԻ ԳՈՐԾԱՐԱՆՆԵՐԻ



ՌՈՅԵԱԼՆԵՐ



ԳԱՑՆԱՄԱՐԻՐՆԵՐ



Փլոհարմոնիումներ, ֆլեյտաներ կլիթառներ, ֆլէյտոներ, կլարնետներ, ձայնախաչեր, լարեր և այլն և այլն

Բոլոր տեսակ գործիքների համար գինը կարելի է վճարել մաս առ մաս.

ՆՈՐ-ՊՐԷՅՍԿՈՒՐԱՆՏՆԵՐՆ
ՈՒՂԱՐԿՈՒՄ ԵՆ 2ՐՐ

ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ԵՒ ՉԱՓՆԱՉԵՐԻ ԿՈՎԿԱՍԵԱՆ ԿԵՆԴՐՈՆԱԿԱՆ

ԴԵՊՕ

Բ. Մ. ՄԻՐԻՄԱՆԵԱՆԻ
МУЗЫКАЛЬНОЕ ДЕПО
Б. М. МИРИМАНЯНЪ
ТИФЛИСЪ, ДВОРЦОВАЯ ул.
36—12

ԹԻՖԼԻՍԻ ՀԱՑՈՑ ՀՐԱՏ. ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Լոյս տեսաւ

ՄԱՐԴԵՄ

(HOMO SUM)

ՎԷՊ

Գերմաներէն բնագրից թարգմանեց
ՍՏ. ՄԱԼԽԱՍԵԱՆՑ

428 երես, ԳԻՆՆ Է 1 ՌՈՒԲԼԻ

Դիմել՝ Армянское Издательское Общество въ Тифлисѣ.

(1067) 50—20

ԿԵՕԼԵՐԵԱՆ ԿԱՇՈՒ ԱՊՊԱՐԵՏՈՒՐԱ

(Келерская гиб. кожевенная аппаретура)

Ծախու կայ ԱՄԵՆ ՏԵՂ ԲՈԼՈՐ աւելի նշանաւոր վաճառատեղիների մօտ: Գերազանց միջոց կաշուն սև փայլ տալու և չծծող զարձնելու համար: Անփոխարինելի է կանանց կօշիկների համար, որովհետև չի կեղտոտացնում շորը: Շատ լաւ նորոգում և պահպանում է ամեն տեսակ կաշու իրեր, ինչպէս սար-վոյեաժներ (մինչև անգամ պորտմոնէներ), ձիերի սարք ու կարգը, կառքերի, զինուորական կաշուէ իրեր և այլն: Գինը խիստ էժան է:

(М.) 11 3—3



Առաջիկայ տօների նկատմամբ, պատրաստել եմ մեծաքանակ բազմատեսակ չքեղ իրեր դուս 56% պրոբի ոսկուց, յատկապէս նուէրների համար: Առանձնապէս առաջարկում եմ չքեղ նուէրներ:

ԳԱՐՆԻՏՈՒՐ

56% պրոբի ոսկու **ԱՊԱՐԱՆՋԱՆ**, որ շինուած է չքեղ, զարդարուած է Պարիզի արհեստականի չողակներով, իսկ մէջ տեղը հագցրած են չափուղեայ, ռուբին, փերուզ և այլն. նոյնպիսի մի զոյգ ԱՊԱՆՋԻ-ՕՂԵՐ և ՄԱՏԱՆԻ, բոլորը դուս 56% պր. ոսկուց, միմիայն 12 բուբ.: Օտարերկրացիներին «ԳԱՐՆԻՏՈՒՐԸ» ուղարկում է ՌՈՒՆՑ ԿԱՆԽԱՁՔԵՐ, վերադիր վճարով յատկապէս պատրաստուած չքեղ փուտլեարով:

Հասցէն՝ И. Вузееръ, складъ золотыхъ издѣлій Варшава, Граничная, 6.

(М.) 105. 747. 10—2

ԾԱՆՈՒՑՈՒՄՆ

Լոյս է տեսել «**ՔՆԱՐԻԿ ՄԱՆԿԱԿԱՆ**» եւրոպական ձայնապրութեամբ, որ յարմարեցրած է պաշնամուրի վրայ նուագելու և երգելու համար: «Քնարիկը» պարունակում է իւր մէջ 27 հատ մանկական ընտիր երգեր, պարերգեր և աղօթքներ, որ Ս. Էջմիածնի նախկին ուսումնական ժողովի կոմիտէ ընդունուած է ի շարս լաւագոյն դասագրքերի: Ազատասիրանքի հայ գպրութիւնների խորին ուշադրութիւնն ենք հրաւիրում այս գիւրամատչելի եղանակով կազմուած երգարանի վրայ, որ վաճառւում է Թիֆլիսի «Կենդրոնական գրավաճառանոցում», պ. Յովհ. Սուղանաճեանի երաժշտ. մագազինում և ինձ մօտ: Ինչ գիմողները բացի մեծ զիջումից, նաև ճանապարհածախք չեն վճարում: Հատով՝ 1 ռ. 50 կոպ., 50 օր. 1 ռ. 20 կոպ., 100-ով գնողներին՝ 1 ռ.: Ցանկացողները պիտի դիմեն այս հասցէով «Սիմֆերոպոլ—Դաղարոս քահ. Յովսէփեանց»: (1038) 50 - 43

1899 թ. ՏՈՒՅԺ ՕՐԱՑՈՅՑԸ

Լոյս տեսաւ ՄԵՐ ԿԱԶՄԱԾ

Ցանկացողները թող չտապեն մեզ յայտնելու, որպէս զի իւր ժամանակին կարողանանք հասցնել:

20—3 (1001) *Թիֆլիս՝ Մակար Ջմշկեան:*

Ա. Ի. ՊԵՏՐՈՎԻ

ՏՊԱՐԱՆԸ

(Թիֆլիս, Գոլովինեան պրոսպեկտ, տուն № 12)

յայտարարում որէ, ստացուած են նոր բազմատեսակ տառեր, զանազան պոլիտիպաժներ հարսանիքների, երեկոյթների, հրաւիրաթղթերի. ճաշկերոյթների, խորտակացուցակների համար և այլն: Տպագրում է ամեն տեսակ բլանկներ և գրքեր արքունական և մասնաւոր հաստատութիւնների համար առևտրական գրքեր, հաշիւներ, ծրարների մակագրութիւններ և այլն, այլ և հաշտարար դատարանների համար կոչնագրեր տեղական բոլոր լեզուներով, արձանագրութիւններ, անդորրագրերի մատեաններ և այլն: Բրուշիւրներ և գրքեր ռուսերէն, հայերէն, վրացերէն և օտար լեզուներով: Բացի գրանից տպարանում կան մեծ քանակութեամբ բազմազան տառեր աֆիշների, յայտարարութիւնների եւ ուրիշ ծանուցումների համար:

Ռուսերէն, հայերէն և վրացերէն այդեռամսեռը սկսած 1 բուբլուց 100 հատի համար գեղեցիկ թղթի վրայ:

Дозв. цензурою. Тифлисъ, сентября 28 го дня, 1898 г. Տպարան Ա. Ի. Պետրովի Типографія А. И. Петрова, Голов. проспектъ, домъ № 12 Телефонъ № 387.